**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. 511-703, 511-704

ՎԴ - Ն- 6263

«04» օգոստոսի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Միրզոյան,**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի, 213-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում ընտրելու համար առաջարկվում է Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված՝ Վճռաբեկ դատարանի նախագահի Երվանդ Հենրիկի Խունդկարյանի թեկնածությունը:

Կից ներկայացվում է Ե.Խունդկարյանի վերաբերյալ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 6-րդ մասով, 141-րդ հոդվածի 4-րդ մասով և Ազգային ժողովի աշխատակարգով սահմանված փաստաթղթերի պատճենները:

Առդիր՝ 37 էջ:

**Հարգանքով՝**

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Վ.Սարգսյան 5, Հեռ. 511-703, 511-704

**ՎԴ - Ն-6264**

**«04» օգոստոսի 2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Միրզոյան,**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 16.12.2016թ. թիվ ԱԺՕ-267-Ն որոշման 93-րդ կետի 8-րդ ենթակետը՝ տալիս եմ իմ գրավոր համաձայնությունը Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում ընտրվելու համար:

**Հարգանքով՝**

**ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ № 01Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականի հուլիսի 31-ին, քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում թեկնածու առաջարկելու վերաբերյալ հարցը, հիմք ընդունելով ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Երվանդ Հենրիկի Խունդկարյանին ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրելու վերաբերյալ արձանագրությունը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասով, 213-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով և 75-րդ հոդվածով

# Ո Ր Ո Շ Ու Մ Է

ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից որպես ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրված՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Երվանդ Հենրիկի Խունդկարյանի թեկնածությունն առաջարկել ՀՀ Ազգային ժողովին՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի թափուր տեղում ընտրելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2020թ. հուլիսի 31
ք.Երևան

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

### ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի ______ Երվանդ Հենրիկի Խունդկարյանը ______
/անուն, հայրանուն, ազգանուն/

նույնականացման քարտ՝

հանդիսանում է միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների
վարչության պետ, ոստիկանության գնդապետ
**Ա. Մկրտչյան**

/ստորագրություն/

Կ.Տ

«03» 08 2020թ.

N Ն-45729

# ԴԻՊԼՈՄ

Ա № 004016

Սույն դիպլոմը տրված է Երվանդ Հենրիկի Խունդկարյանին առ այն, որ նա 1989 թվականին ընդունվել է Երևանի պետ. համալսարան և 1994 թվականին ավարտել է նույն համալսարանի լրիվ դասընթացը «Իրավագիտություն» մասնագիտությամբ

Պետական հանձնաժողովի 1994 թվականի «13» հուլիսի որոշմամբ տրված է իրավաբանի որակավորում

Պետական քննական հանձնաժողովի նախագահ

Ռեկտոր

Կ.Տ.

Քարտուղար

Քաղաք Երևան «1» 06 1995թ.

Գրանցման № 57743

Երևանի № 3 տպարան

# ДИПЛОМ

А № 004016

Настоящий диплом выдан Хундкаряну Ервандy Генриковичу в том, что он в 1989 году поступил в Ереванский гос. университет и в 1994 году окончил полный курс названного университета по специальности „Правоведение"

Решением Государственной экзаменационной комиссии от «13» июля 1994 года присвоена квалификация юриста

Председатель государственной экзаменационной комиссии

Ректор

М.П.

Секретарь

Город Ереван «1» 06 1995 г.

Регистрационный № 57743

Ереванская типография №3

ԱՆՁՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ



1. Ազգանունը Խունդկարյան

Անունը Երվանդ Հայրանունը Հենրիկի

2. Սեռը արական

3. Ծննդյան ամսաթիվը 19.09.1972թ.

4. Ծննդյան վայրը ք. Երևան
(մարզ, քաղաք, քյուղ)

5. Կրթությունը բարձրագույն

| N | Ուսումնական հաստատությունը | | Ֆակուլտետի կամ բաժանմունքի անվանումը | Ընդունվելու տարին | Ավարտելու տարին | Մասնագիտությունը | Ինչ որակավորում է ստացել ուսումնական հաստատությունն ավարտելով | Դիպլոմի կամ վկայականի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Վայրը | | | | | | |
| | Երևանի պետական համալսարան | ք. Երևան | Իրավաբանական | 1989թ. | 1994թ. | իրավագիտություն | Իրավաբան | Ա № 004016 |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

6. Ինչ օտար լեզուների է տիրապետում ռուսերեն, անգլերեն
(կարդում և թարգմանում է բառարանով, կարդում է և կարող է բացատրվել, տիրապետում է ազատ)

7. Գիտական աստիճանը, գիտական կոչումը

8. Ինչպիսի գիտական աշխատություններ և գյուտեր ունի

9. Կատարած աշխատանքն աշխատանքային գործունեության սկզբից (ներառյալ ուսումը բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում, զինվորական ծառայությունը և աշխատանքը համատեղությամբ)

Այս կետը լրացնելիս պետական մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների անվանումները և գտնվելու վայրերը անհրաժեշտ է գրել այնպես, ինչպես դրանք կոչվել են աշխատելու ժամանակահատվածում

| Ամսաթիվը | | Պետական մարմնի, հիմնարկի և կազմակերպության | | Պաշտոն | Պետական ծառայության դասային աստիճանը |
|---|---|---|---|---|---|
| Ընդունվելու | Ազատվելու Ավարտելու | Անվանումը | Գտնվելու վայրը | | |
| 01.09.1989թ. | 02.02.1990թ. | ՀԽՍՀ տրանսպորտային առաքման ձեռնարկություն | ք. Երևան | Ավտոփականա-գործ | |
| 15.02.1990թ. | 10.04.1992թ. | «Մասսիվ» գործարան | ք. Երևան | Բանվոր | |
| 15.04.1992թ. | 24.11.1993թ. | ՀՀ Գերագույն դատարան | ք. Երևան | Օպերատոր պատ-ճենահանող մեքե-նայի գծով | |
| 24.11.1993թ. | 13.07.1994թ. | ՀՀ Գերագույն դատարան | ք. Երևան | Քրեական գործերի դատական կոլե-գիայում դատական նիստերի քարտու-ղար | |
| 13.07.1994թ. | 17.01.1996թ. | ՀՀ Գերագույն դատարան | ք. Երևան | Օրենսդրության հա-մակարգման և դա-տական պրակտի-կայի ամփոփման բաժնի ավագ խոր-հրդատու | |
| 17.01.1996թ. | 18.11.1996թ. | ՀՀ Գերագույն դատարան | ք. Երևան | Քրեական գործերի դատական կոլե-գիայի ավագ խոր-հրդատու | |
| 18.11.1996թ. | 22.05.1998թ. | Զորակոչվել եմ ՀՀ ազգային բանակ | | | |
| 22.05.1998թ. | 12.01.1999թ. | ՀՀ Գերագույն դատարան | ք. Երևան | Օրենսդրության հա-մակարգման և դա-տական պրակտի-կայի ամփոփման բաժնի ավագ խոր-հրդատու | |
| 27.01.1999թ. | 19.10.2001թ. | ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դա-տարան | ք. Երևան | Դատավորի օգնա-կան | |
| 19.10.2001թ. | 01.01.2008թ. | ՀՀ Տնտեսական դատարան | ք. Երևան | Դատավոր | |
| 01.01.2008թ. | 08.10.2008թ. | ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-կան դատարան | ք. Երևան | Դատավոր | |
| 08.10.2008թ. | 17.09.2010թ. | ՀՀ վճռաբեկ դատարանի քա-ղաքացիական և վարչական պալատ | ք. Երևան | Դատավոր | |
| 17.09.2010թ. | 20.07.2018թ. | ՀՀ վճռաբեկ դատարանի քա-ղաքացիական և վարչական | ք. Երևան | Նախագահ | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | պալատ | | | |
| 2014թ. | 2015թ. | ՀՀ արդարադատության ակադեմիա | ք. Երևան | Դասախոս | |
| 2016թ. | մինչ 2019 թվականը ներառյալ | Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ պետական քննական հանձնաժողով | ք. Երևան | Նախագահ | |
| 2017թ. | մինչ օրս | ՀՀ արդարադատության ակադեմիա | ք. Երևան | Դասախոս | |
| 20.07.2018թ. | 13.09.2018թ. | ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատ | ք. Երևան | Նախագահ՝ 6 տարի ժամկետով | |
| 13.09.2018թ. | մինչ օրս | ՀՀ վճռաբեկ դատարան | ք. Երևան | Նախագահ՝ 6 տարի ժամկետով | |
| 2019թ. | մինչ օրս | Երևանի պետական համալսարան | ք. Երևան | Դասախոս | |

10. Պետական պարգևներ և մրցանակներ
(երբ, ում կողմից և ինչով է պարգևատրվել)

- ✓ ՀՀ Նախագահի հրամանագրով 18.09.2014 թվականին ՀՀ Անկախության տոնի առթիվ դատական համակարգի զարգացման գործում ներդրած ավանդի համար պարգևատրվել է «Մխիթար Գոշ» մեդալով.
- ✓ ՀՀ Նախագահի հրամանագրով 29.12.2017 թվականին օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ունեցած վաստակի համար շնորհվել է ՀՀ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում.
- ✓ Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով 18.01.2020 թվականին Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դատական համակարգերի համագործակցության ամրապնդման գործում ներդրած մեծ ավանդի համար պարգևատրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մխիթար Գոշ» մեդալով:

11. Առնչությունը զինվորական ծառայության հետ զինապարտ

Զինվորական կոչումը ավագ

Կազմը ______

(հրամանատարական, քաղաքական, վարչական, տեխնիկական և այլն)

Զորքի տեսակը մոտոհրաձգային գունդ

12. Ընտանեկան դրությունն անձնական թերթիկը լրացնելու պահին ամուսնացած

(թվարկել ընտանիքի անդամներին (ծնողներ, ամուսին (կին), երեխաներ)՝ նշելով նրանց ծննդյան ամսաթիվը, աշխատելու կամ սովորելու ուսումնական հաստատության անվանումը և գտնվելու վայրը)

Կինս՝ Գևորգյան Ռուզաննա Սուրենի – ծնված՝ 07.09.1971թ., ներկայումս չի աշխատում

Որդիս՝ Խունդկարյան Հենրիկ Երվանդի – ծնված՝ 16.09.1997թ., 27.05.2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, ք. Երևան, ներկայումս չի աշխատում
Որդիս՝ Խունդկարյան Դավիթ Երվանդի – ծնված՝ 11.11.2001թ., 2019 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետ, ք. Երևան, 30.01.2020 թվականին զորակոչվել է ՀՀ ազգային բանակ

13. Բնակության վայրը

14. Հաշվառման վայրը

15. Բնակարանային, աշխատանքային, բջջային հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեն

16. Անձնագիրը

«03» «օգոստոսի» 2020թ.

Անձնական ստորագրությունը

# ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել եմ 1972 թվականի սեպտեմբերի 19-ին, Երևան քաղաքում, ծառայողի ընտանիքում: Ընտանիքիս կազմը հետևյալն է՝

1. Մայրս՝ Խունդկարյան (մինչամուսնական ազգանունը՝ Գասպարյան) Հռիփսիմե Վարդգեսի, ծնվ. 1951 թվականին,

2. կինս՝ Գևորգյան Ռուզաննա Սուրենի, ծնվ. 1971 թվականին,

3. որդիս՝ Խունդկարյան Հենրիկ Երվանդի, ծնվ. 1997 թվականին,

4. որդիս Խունդկարյան Դավիթ Երվանդի, ծնվ. 2001 թվականին,

Հայրս՝ Խունդկարյան Հենրիկ Գուրգենի, ծնվ. 1940 թվականին, մահացել է 1985 թվականին:

1979-1989 թվականներին սովորել եմ Երևան քաղաքի հ. 139 անգլերեն թեքումով դպրոցում՝ ավարտելով այն գերազանցությամբ:

1989 թվականին ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երեկոյան բաժինը, որն ավարտել եմ 1994 թվականին: Ուսման ընթացքում և դրանից հետո աշխատել եմ մի շարք կազմակերպություններում:

1989 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 1990 թվականի փետրվարի 2-ը աշխատել եմ ՀԽՍՀ տրանսպորտային առաքման ձեռնարկությունում՝ որպես ավտոփականագործ:

1990 թվականի փետրվարի 15-ից մինչև 1992 թվականի ապրիլի 10-ը աշխատել եմ «Մասսիվ» գործարանում՝ որպես բանվոր:

1992 թվականի ապրիլի 15-ից աշխատել եմ ՀՀ Գերագույն դատարանում: Աշխատել եմ պատճենահանող մեքենայի գծով օպերատորի, քրեական գործերի դատական կոլեգիայի դատական նիստերի քարտուղարի, օրենսդրության համակարգման և դատական պրակտիկայի ամփոփման բաժնի ավագ խորհրդատուի, քրեական գործերի դատական կոլեգիայի ավագ խորհրդատուի պաշտոններում:

1996 թվականի նոյեմբերի 18-ին զորակոչվել եմ ՀՀ ազգային բանակ և մինչև 1998 թվականի մայիսի 22-ը

1998 թվականի մայիսի 22-ին վերականգնվել եմ աշխատանքի ՀՀ Գերագույն դատարանում՝ օրենսդրության համակարգման և դատական պրակտիկայի ամփոփման բաժնի ավագ խորհրդատուի պաշտոնում:

1995 թվականի մայիսի 1-ին ՀՀ Գերագույն դատարանի նախագահի թիվ 45 հրամանով ինձ շնորհվել է 2-րդ դասի իրավաբանի դասային կոչում:

1999 թվականի հունվարի 12-ին ՀՀ Գերագույն դատարանի լուծարման կապակցությամբ ազատվել եմ աշխատանքից՝ համաձայն ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի հրամանի:

1999 թվականի հունվարի 27-ին ընդունվել եմ աշխատանքի ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2001 թվականի հոկտեմբերի 19-ից մինչև 2008 թվականի հունվարի 1-ն աշխատել եմ ՀՀ տնտեսական դատարանի դատավոր:

Հայաստանի Հանրապետության նախագահի 24.12.2001 թվականի թիվ ՆՀ-997 հրամանագրով ինձ՝ որպես ՀՀ տնտեսական դատարանի դատավորի, շնորհվել է որակավորման 3-րդ դաս՝ ելնելով <<Դատավորի կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածից:

2008 թվականի հունվարի 1-ից մինչև 2008 թվականի հոկտեմբերի 8-ը աշխատել եմ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր:

2008 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել եմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր, որպիսի պաշտոնում աշխատել եմ մինչև 2010 թվականի սեպտեմբերի 17-ը:

2010 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել եմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ, որպիսի պաշտոնում աշխատել եմ մինչև 2018 թվականի հուլիսի 20-ը:

2010 թվականի հոկտեմբերի 28-ից մինչև 2014 թվականի օգոստոսի 1-ը եղել եմ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի ուսումնական հանձնաժողովի նախագահ:

2010 թվականից մինչև 2013 թվականը եղել եմ ՀՀ դատական դպրոցի կառավարման խորհրդի նախագահ:

2013 թվականի սեպտեմբերի 20-ին ընտրվել եմ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ՝ 4 տարի ժամկետով:

2014 թվականի հուլիսի 25-ին ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել եմ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամ՝ 4 տարի ժամկետով:

2014 թվականի հուլիսի 31-ին ընտրվել եմ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի նախագահ, որպիսի պաշտոնում աշխատել եմ մինչև 2018 թվականի հուլիսի 25-ը:

2014 թվականից մինչև 2015 թվականը, ինչպես նաև 2017 թվականից մինչ օրս դասավանդում եմ ՀՀ արդարադատության ակադեմիայում (ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը և ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը թեմաներով):

2016 թվականին եղել եմ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի նախագահ:

2016 թվականից մինչև 2019 թվականը ներառյալ եղել եմ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունք և

քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ պետական քննական հանձնաժողովի նախագահ:

2017 թվականի ապրիլի 28-ին ՀՀ դատավորների միության ընդհանուր ժողովի կողմից ընտրվել եմ <<Հայաստանի Հանրապետության դատավորների միություն>> հասարակական կազմակերպության նախագահ:

2017 թվականի դեկտեմբերի 22-ին ընտրվել եմ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի անդամ՝ 4 տարի ժամկետով:

2018 թվականի հունվարի 26-ին ընտրվել եմ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի նախագահ:

2018 թվականի հուլիսի 20-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել եմ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ՝ 6 տարի ժամկետով, որպիսի պաշտոնում աշխատել եմ մինչև նույն թվականի սեպտեմբերի 13-ը:

2018 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ Սահմանադրության 166-րդ հոդվածի 5-րդ մասի և <<Ազգային ժողովի կանոնակարգ>> սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով ՀՀ ազգային ժողովի կողմից ընտրվել եմ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ՝ 6 տարի ժամկետով:

2019 թվականից մինչ օրս դասավանդում եմ Երևանի պետական համալսարանում:

2020 թվականի հունվարի 25-ին ընտրվել եմ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի նախագահ:

2014 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ Անկախության տոնի առթիվ ՀՀ Նախագահի հրամանագրով դատական համակարգի զարգացման գործում ներդրած ավանդի համար պարգևատրվել եմ <<Մխիթար Գոշ>> մեդալով:

2017 թվականի դեկտեմբերի 29-ին ՀՀ Նախագահի հրամանագրով օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ունեցած վաստակի համար ինձ շնորհվել է ՀՀ վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում:

2020 թվականի հունվարի 18-ին Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրով Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության դատական համակարգերի համագործակցության ամրապնդման գործում ներդրած մեծ ավանդի համար պարգևատրվել եմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության <<Մխիթար Գոշ>> մեդալով:

**Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ**

03. 08. 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Սահմանադրության 166-րդ հոդվածի 5-րդ մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասի՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Երվանդ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ ընտրել Վճռաբեկ դատարանի նախագահ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — ԱՐԱ ԲԱԲԼՈՅԱՆ

2018 թվական, սեպտեմբերի 13
Երևան

ԱԺՈ - 017 - Ա

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
N- 1083
14 09 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

## ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 139-րդ հոդվածի 1-ին և 166-րդ հոդվածի 4-րդ մասերը, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 12-ի ԲԴԽ-25-Ո-55 որոշմամբ ներկայացված առաջարկությունը.

Երվանդ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ նշանակել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ՝ վեց տարի ժամկետով:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

2018թ. հուլիսի 20
Երևան
ՆՀ-375-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 10-ի առաջարկությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

Երվանդ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2010թ. սեպտեմբերի 17
Երևան
ՆՀ-221-Ա

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Մուտքի № Մ-1591
Ամսաթիվ 18.09.2010

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
# Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ը

## Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Արդարադատության խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 2-ի առաջարկությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

Երվանդ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի լիազորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ — Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2008թ. հոկտեմբերի 8
Երևան
ՆՀ-288 -Ա

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Մուտք № ԹՆ- 1134
Ամսաթիվ 14.10.2008 թ.

36